

Լիանա Աղաբեկյան

ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՏ ԽԱՉԱԿՐԱՑ ԵՐՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՆԱԽՕՐԵՒՆ

**Միրիոկեֆալուն, Սրբազան Հռոմեական կայսրություն, Ռումի սելջուկյան սուլթանություն,
Եգիպտոսի էյուբյան սուլթանություն, Չանգինների իշխանություն,
Փոքրիկ Հունաստան, Ալեմանիայի թագավոր, սրբազան վայրեր**

Դարեր շարունակ Մերձավոր Արևելքը գտնվել է ռազմաքաղաքական տարբեր ուժերի ուշադրության կենտրոնում: 11-րդ դարի վերջից, մասնավորապես Առաջին խաչակրաց արշավանքի ժամանակներից իրավիճակը Մերձավոր Արևելքում զգալի չափով փոխվեց, քանզի Արևմտյան Եվրոպան և սկսեց լուրջ տարածքային հավակնություններ դրսևորել նշված տարածաշրջանի նկատմամբ: 1099թ. խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավումից հետո Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական պայքարը ոչ միայն չթուլացավ, այլև շարունակվեց նոր թափով՝ իր մեջ ներառելով քրիստոնյա և մահմեդական քաղաքակրթական միջավայրերը ներկայացնող մի շարք քաղաքական ուժեր:

12-րդ դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը շարունակում էր մնալ լարված՝ պայմանավորված որոշ պետությունների ակտիվ ռազմաքաղաքական ու դիվանագիտական գործունեություններով և այդ պետությունների կողքին նոր, ոչ պակաս ուժեղ քաղաքական ուժերի ի հայտ գալով:

Երրորդ խաչակրաց արշավանքի նախօրեին Մերձավոր Արևելքում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է պարզաբանել մի շարք կարևոր հիմնախնդիրներ.

1. Ի՞նչ փոփոխությունների հանգեցրին Մերձավոր Արևելքի քաղաքական ասպարեզում Եգիպտոսի էյուբյան սուլթանության հիմնադրումը և սուլթան Սալահ ադ-Դինի արտաքին քաղաքական ծրագրերը:
2. Ինչպիսի՞ հետևանք ունեցավ 1176 թ. Բյուզանդիայի կրած ջախջախիչ պարտությունը սելջուկ-թուրքերից Միրիոկեֆալունի ճակատամարտում, և կայսրության միջազգային հեղինակության անկումը:
3. Որո՞նք էին Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ Առաջին Շիկամորուսի արևելյան քաղաքականության հիմնական նպատակները և որքան՞ով էին դրանք ներագդում խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Մերձավոր Արևելքում ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակի վրա:

12-րդ դարի 70-ական թվականներին Մերձավոր Արևելքում հայտնվեց մի նոր, հզոր պետություն՝ Եգիպտոսի էյուբյան սուլթանությունը՝ ազգությամբ քուրդ Սալահ ադ-Դինի (1174-1193) գլխավորությամբ: Վերջինս, օգտվելով Ասորիքի տիրակալ Նուր ադ-Դինի մահից, 1174թ. հռչակվեց Եգիպտոսի սուլթան և բավականին

կարճ ժամանակահատվածում իրեն ենթարկեց գրեթե ամբողջ Ասորիքն ու Միջագետքի մի մասը՝ դառնալով տարածաշրջանի կարևորագույն ռազմաքաղաքական դերակատարներից մեկը: Այդ պահից սկսած՝ և՛ Արևմուտքի, և՛ Արևելքի մերձավորարևելյան քաղաքականությունում սկսեցին կարևորվել նաև այս պետության հետ հարաբերությունները¹:

Զժխտելով Սալահ ադ-Դինի դիվանագիտական և ռազմական տաղանդը՝ չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ Մերձավոր Արևելքում Եգիպտոսի սուլթանության դիրքերի ամրապնդման համար կային նպաստավոր պայմաններ. ա) Բյուզանդական կայսրության թուլացումը, ինչը հնարավորություն էր տալիս Եգիպտոսի սուլթանին՝ առանց մեծ դժվարության մեկը մյուսի հետևից իր ազդեցությանը ենթարկել մի շարք մահմեդական և քրիստոնեական տիրույթներ, բ) Նուր ադ-Դինի մահից հետո Ջանգիների իշխանության թուլացումը, որի հետևանքով սկսվել էին լուրջ տարածքային վեճեր Ջանգիների և Արևելքի խաչակրաց պետությունների, մասնավորապես Անտիոքի միջև, գ) խաչակրաց պետությունների թուլացումը:

Մերձավոր Արևելքում ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակից ելնելով՝ Եգիպտոսի սուլթանը նույնիսկ դիվանագիտական կապեր հաստատեց Բյուզանդիայի հետ՝ ցանկանալով դաշինքն ուղղել իր համար վտանգավոր երկու քաղաքական ուժերի՝ Ռումի սելջուկյան սուլթանության և Սրբազան Հռոմեական կայսրության դեմ: Դա բնական էր, քանզի Սալահ ադ-Դինի համար, ով նպատակ ուներ իր տիրապետությունը հաստատել տարածաշրջանի մահմեդական իշխանություններում, ինչպես նաև Արևելքից դուրս մղել խաչակիրներին, անխուսափելի էր շահերի բախումը թե՛ գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի, թե՛ սելջուկյան սուլթան Քիլիջ Արսլանի (1156-1192) հետ: Նրանցից յուրաքանչյուրն իր ծրագրերն ուներ Մերձավոր Արևելքում, որոնք հատվում էին ոչ միայն Եգիպտոսի, այլև Բյուզանդիայի և Կիլիկյան Հայաստանի քաղաքական շահերին:

Երրորդ խաչակրաց արշավանքի նախօրեին Մերձավոր Արևելքում տիրող ռազմաքաղաքական իրավիճակն ավելի խորությամբ պատկերացնելու համար հարկ է նշել նաև այն շրջադարձային փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության մեջ: Բյուզանդիայի արտաքին քաղաքականության համար չափազանց կարևոր նշանակություն ունեցավ 1176 թ. սեպտեմբերի 17-ին Միրիոկեֆալոնեի ճակատամարտը, որտեղ սելջուկ-թուրքերը ջախջախիչ պարտության մատնեցին բյուզանդացիներին: Այս պարտությունը ոչ միայն մեծ հարված հասցրեց կայսրության ռազմական հեղինակությանը, այլև վերջնականապես կործանեց սելջուկ-թուրքերին Փոքր Ասիայից վտարելու նրա վերջին փորձը: Այսուհետ Բյուզանդիան ստիպված էր իր գրեթե ողջ ուշադրությունը կենտրոնացնել սելջուկների հարձակումներից պաշտպանվելու բարդ խնդրի վրա: Պատահական չէ, որ ինքը՝ բյուզանդական կայսր Մանուել Կոմնենոսը (1143-1180) այս ճակատամարտը համենատուն էր 1071թ. Մանազկերտի ճակատամարտի հետ. «Այն

¹ Stü R. Sternfeld, Abirrungen und Ablenkungen der Kreuzzüge, Historische Zeitschrift, Bd. 106, H. 2, 1911, S. 307:

ինչ իր հետ պատահել է, նույնն է, ինչ պատահել է Ռոմանոս Դիոգենեսի հետ, քանզի այս կայսրը ևս, մտնելով պատերազմի մեջ թուրքերի հետ, կորցրեց շատ զորք»¹:

Այն, որ վերոնշյալ ճակատամարտը ծանր հարված էր Բյուզանդիային արտաքին քաղաքական ծրագրերի իրականացման ճանապարհին, պարզ երևում է նաև կայսրության հետագա դիվանագիտությունից: Բյուզանդական կայսրությունը, փորձելով գոնե որոշ չափով վերականգնել իր խաթարված հեղինակությունը և ազդեցությունը Արևելքում, այլընտրանքի բացակայության պայմաններում համաձայնության եկավ Սալահ ադ-Դինի հետ՝ ընդդեմ սելջուկ-թուրքերի և խաչակիրների: Ակնհայտ է, որ սա Բյուզանդիայի կողմից փորձ էր՝ պահպանել իր հեղինակությունը քրիստոնյա աշխարհում, մանավանդ, որ այս առումով Բյուզանդիան ուներ լուրջ մրցակից՝ ի դեմս Սրբազան Հռոմեական կայսրության²:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս իրադարձությունների հետագա ընթացքը, որքան ծանր դրություն էր առաջացրել Միրիոկեֆալոնի ճակատամարտը Բյուզանդիայի համար, նույնքան շահավետ պայմաններ էր ստեղծում Սալահ ադ-Դինի, Ֆրիդրիխ Շիկամորուսի և Քիլիջ Արսլանի համար՝ Մերձավոր Արևելքում իրենց դիրքերի ամրապնդման տեսանկյունից:

Անշուշտ, Երրորդ խաչակրաց արշավանքի նախօրեին Բյուզանդական կայսրության և Եգիպտոսի սուլթանության միջև հարաբերությունների մերձեցման դրդապատճառներն ավելի խորությամբ պատկերացնելու համար հարկ է անդրադառնալ նաև գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի (1152-1190) արևելյան քաղաքականությանը:

Ֆրիդրիխ Առաջին Շիկամորուսը գահ բարձրացավ կայսրության համար բարդ և բեկումնային, անգամ գերմանական պատմաբանների կողմից «բանալի» որակված ժամանակաշրջանում (die Schlüsselzeit)³: Չնայած դրան՝ նա կարողացավ իր գահակալության առաջին տասնամյակներին (1150-70-ական թթ.) մասամբ հարթել Սրբազան Հռոմեական կայսրությունում առկա ներքաղաքական հակամարտությունը, ինչպես նաև ժամանակավորապես լուծել Արևմուտքում ունեցած հակամարտությունները Հռոմի պապի և Լոմբարդական լիգայի հետ, որից հետո ամբողջ ուշադրությունն ուղղեց Արևելք:

1180 թ. նա Գերմանիայից վտարեց Սաքսոնիայի և Բավարիայի դուքս Հենրիխ Առյուծին (վերջինս իր կենտրոնախույս ձգտումներով խարխլում էր կայսրության ներքին միասնությունը)՝ դրանով ժամանակավորապես խաղաղություն հաստատելով նաև կայսրության ներսում⁴:

¹ , , 1, , 1860, .70.

² St'у Ralph-Johannes Lilie, Bysanz und das Lateinische Europa. Verbindungen, Brüche Gegensätze. Zu einer Möglichen Kooporetion von Mediävistik Byzantinistik, Historische Zeitschrift, Beihefte, vol. 32, 2001, S. 34:

³ St'у H. Seibart, Heinrich der Löwe und die Welfen Ein Jubiläum und sein Ertrag für die Forschung, Historische Zeitschrift, Bd. 268, H. 2, (Apr., 1999), S. 378:

⁴ St'у . , , , 2010, . 315:

Ինչ վերաբերում է Գերմանական կայսեր և Յոհանի պապի հարաբերություններին, ապա առկա լարվածության հիմքում ընկած էր Ֆրիդրիխ Առաջինի «կայսերական իշխանության» մասին ունեցած պատկերացումը, ըստ որի հռոմեական կայսրն ուներ անսահման աշխարհիկ և սրբազան իշխանություն, որը ստանում էր անմիջականորեն Աստուծուց: Ըստ այդմ Յոհանի պապի դերը պարզապես երկրորդական էր դառնում: Դրա վառ ասպարեզն էր Ֆրիդրիխի խոսքերը Յոհանի պապին. «Հռոմեական կայսրն ընտրվում է Աստծո բարեհաճությամբ: Նա կլինի Աստծո ստվերը, եթե չլինի Յոհանի տերը»¹:

Չնայած նման լարվածությանը՝ արդեն 1177թ. Ֆրիդրիխը կարողացավ Վենետիկում փոխհամաձայնության գալ Յոհանի պապի, իսկ 1183թ. հունիսին Կոնստանցում կնքված պայմանագրով՝ Լոմբարդական լիգայի հետ: Առաջին հայացքից Իտալիայում Ֆրիդրիխի ձախողումն ազդարարող այս պայմանագրերը իրականում նրան ավելի մեծ օգուտ բերեցին, քան Յոհանի պապին և իտալական քաղաքներին, քանզի Վենետիկի պայմանագրից հետո Ալեքսանդր Երրորդն անզոր էր ամրապնդել իր հեղինակությունը Ապենինյան թերակղզու կենտրոնում: Դա ցույց է տալիս, որ իր պարտությունից հետո Ֆրիդրիխն Իտալիայում ավելի ուժեղ էր, քան դրանից առաջ. Խաղաղությունը նրան տվեց այնպիսի օգուտներ, որոնց ինքը չէր կարող հասնել պատերազմի ճանապարհով²:

Դրանից հետո ժամանակավորապես դադարեցին հակամարտությունները իտալական քաղաքների և Յոհանի պապ Ալեքսանդր Երրորդի հետ: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ այս պայմանագրերը կարևոր էին գերմանական կայսեր համար ոչ միայն Արևմուտքում առկա տարածայնությունները հարթելու տեսանկյունից, այլև Բյուզանդական կայսրությանը դիվանագիտական հարված հասցնելու առումով, քանզի կայսր Մանուելը մեծ հույսեր էր կապում Գերմանական կայսրության, պապականության և Լոմբարդական քաղաքների միջև մինչ այդ գոյություն ունեցած թշնամանաքի հետ՝ ցանկանալով այն ծառայեցնել իր շահերին³:

Փաստորեն, առաջին հայացքից միայն գերմանական կայսերը և Յոհանի պապին առնչվող հակամարտությունը իրականում մեծ չափով վերաբերում էր նաև Բյուզանդական կայսրությանը, քանզի Հռոմեական կայսրության երբեմնի փառքի և հզորության վերականգնման Ֆրիդրիխի ծրագիրը բնականաբար ենթադրում էր նաև Բյուզանդիայի կողմից այդ կայսրության գերակայության ընդունումը, ինչն անհանդուրժելի էր Բյուզանդիայի համար: Սա էր, թերևս, հիմնական պատճառներից մեկը, որ Ֆրիդրիխ Առաջինի արևելյան քաղաքականությունը, որի գլխավոր նպատակն էր նախ Սրբազան Հռոմեական կայսրության քաղաքական ազդեցությունը տարածել խաչակրաց Արևելքում, իսկ հետո իր գերիշխանության տակ միավորել Հռոմեական

¹ . . . , 2009, . 188.

² Տե՛ս . . . , 2002, . 126:

³ Տե՛ս Dieter Berg, Friedrich Barbarossa und die auswärtigen Mächte. Studien zur Außenpolitik 1159-1180, Historische Zeitschrift, Bd 256, H. 1, (Feb, 1993), S. 168:

կայսրությանը պատկանած տարածքների հիմնական մասը, հանդիպեց Բյուզանդիայի լուրջ դիմադրությանը:

Պատահական չէ, որ այս երկու կայսրությունների նախկին փորձերը՝ դաշինք կնքելու և սրբազան վայրերի համար պայքարելու, համար այդպես էլ որևէ էական արդյունք չէին տվել, և հարաբերությունները շարունակում էին մնալ լարված: Ավելին, Ֆրիդրիխ Շիկամորուսը ժամանակին Բյուզանդական կայսրությունը անվանել էր «փոքրիկ Յունաստան»՝ փաստորեն հերթական անգամ շեշտելով, որ Սրբազան Յոննեական կայսրությունը և ոչ թե Բյուզանդիան պետք է իր վրա վերցնի Յոննեական կայսրության երբեմնի հզորությունն ու փառքը վերականգնողի դերը¹: Ինչ վերաբերում է Բյուզանդական կայսրությանը, ապա Խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Ֆրիդրիխ Շիկամորուսին ուղղած իր նամակում կայսր Իսահակը (1185-1195) նրան անվանում էր «Ալեմանիայի թագավոր», իսկ իրեն՝ «Յոննեական կայսր»² :

Ֆրիդրիխ Առաջինի արտաքին քաղաքական ծրագրերի մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել նաև գահ բարձրանալուց անմիջապես հետո Յոննի պապին գրած նամակից, որտեղ նշում է, որ իր նպատակն է «վերականգնել Յոննեական կայսրության մեծությունը նրա նախկին ուժով և փայլով»³ :

Այսպիսով, 12-րդ դարի վերջին քառորդին Բյուզանդիայի հետ հարաբերությունները գերմանական կայսրության համար բարենպաստ համարել չի կարելի, ուստի գերմանական կայսեր համար կարևորվում էին նաև Արևելքում այլ քաղաքական ուժերի՝ Եգիպտոսի սուլթանության, Ռումի սուլթանության, ինչպես նաև Կիլիկյան Յայաստանի հետ հարաբերությունների հստակեցումը⁴:

Ինչպես արդեն նշվեց, Սալահ ադ-Դինը գահակալության առաջին իսկ տարիներից վարելով հաջող արտաքին քաղաքականություն, իր առջև դնում էր ոչ պակաս բարդ ծրագրեր, քան Ֆրիդրիխ Շիկամորուսը: Ուստի, վաղ թե ուշ, նրանց քաղաքական շահերի բախումը Մերձավոր Արևելքում դառնալու էր անխուսափելի: Սա էր պատճառը, որ այս երկու հզոր տիրակալների միջև դիվանագիտական հարաբերությունները խաչակրաց նոր արշավանքի նախօրեին զգալի կերպով լարված էին: Եթե դարի 70-ական թվականների սկզբին, երբ դեռ Եգիպտոսի սուլթանությունը նոր էր սկսել հզորանալ, իսկ Բյուզանդիան շարունակում էր մնալ տարածաշրջանում չափազանց հզոր քաղաքական ուժ, այս երկու պետությունների ղեկավարների միջև նույնիսկ բանակցելու փորձեր էին կատարվում (մասնավորապես, 1172 թ. Ֆրիդրիխ Շիկամորուսը դեսպան ուղարկեց Սալահ ադ-Դինի մոտ՝ ցանկանալով բյուզանդական կայսր Մանուելի հետ վերսկսված դիվանագիտական հարաբերություններում իր համար առավել շահավետ վիճակ ապահովել, ավելին, նույնիսկ քննարկվում էր Սալահ ադ-Դինի որդու և Ֆրիդրիխի դստեր ամուսնության հարցը, ինչը հետագայում կյանքի

¹ Տե՛ս . . . , . . . , 1956, . 165:

² . . . , . . . , 2000, . 679.

³ . . . , նշվ. աշխ., . 126.

⁴ Տե՛ս Ralph-Johannes Lilie, *Byzanz und das Lateinische Europa. Verbindungen, Brüche Gegensätze. Zu einer Möglichen Kooporetion von Mediävistik Byzantinistik, Historische Zeitschrift, Beihefte, vol. 32, 2001, S. 32:*

չկոչվեց), ապա արդեն սելջուկների կողմից Բյուզանդիային հասցված ջախջախիչ հարվածից հետո կտրուկ փոփոխություններ կրեցին նաև վերոնշյալ երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունները:

Այսպիսով, Երրորդ խաչակրաց արշավանքի նախօրեին սկսվեցին բանակցություններ Բյուզանդիայի և Եգիպտոսի սուլթանության միջև: Այս երկու պետությունների կնքած դաշինքն առաջին հերթին ուղղված էր Ռումի սուլթանության դեմ: Վերջինս Բյուզանդիայի համար շարունակում էր մնալ գլխավոր վտանգ: Ինչ վերաբերում է Սալահ ադ-Դինին, ապա նրա և սելջուկյան սուլթան Քիլիջ Արսլանի միջև հակամարտության գլխավոր պատճառն այն էր, որ սելջուկ-թուրքերը, իրականացնելով զգալի տարածքային նվաճումներ, 12-րդ դարի 80-ական թվականներին բավականին հզորացել էին: Ահա թե ինչու Սալահ ադ-Դինը ի դեմս Ռումի սուլթանության տեսնում էր լուրջ մրցակցի Մերձավոր Արևելքի մահմեդական պետությունները միավորելու և այստեղ իր գերիշխանությունը հաստատելու հարցում: Բյուզանդիայի և Եյուբյան սուլթանության համատեղ զորքերը նախատեսում էին Մերձավոր Արևելքի թատերաբեմից դուրս վճռել ոչ միայն սելջուկներին, այլև լատիններին և հայերին¹: Բյուզանդական կայսր Իսահակը պարտավորվում էր Ֆրիդրիխ Շիկամորուսի դեպի Արևելք հնարավոր արշավանքի դեպքում կանգնեցնել նրան, իսկ դրա դիմաց Սալահ ադ-Դինը խոստանում էր վերադարձնել սրբազան վայրերը²: Այս երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների մնանատիպ ընթացքը ուշադրության արժանի է նաև այն տեսանկյունից, որ խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում, երբ Մերձավոր Արևելքում հանդես եկող թե՛ մահմեդականները, թե՛ քրիստոնյաները իրենց գործունեությունը ծավալում էին հանուն սրբազան պատերազմի կամ զոհե դրա քողի տակ (որն առաջին հերթին մղվում էր հանուն Տիրոջ գերեզմանը և Երուսաղեմը անհավատներից փրկելու), բացահայտ կերպով տեղի ունեցավ դիվանագիտական մերձեցում և կնքվեց դաշինք մահմեդական և քրիստոնյա պետությունների միջև³: Փաստորեն այս դեպքում, անհրաժեշտությունից ելնելով, կրոնական գործոնը մի կողմ էր թողնվել: Ինչ վերաբերում է Սուրբ երկրի ազատագրման համար մղվող պատերազմին, ապա արդեն 12-րդ դարում այն շատ դեպքերում վերածվում էր պարզապես պաշտպանողական (հատկապես Արևելքի խաչակրաց պետությունների դեպքում) կամ նվաճողական պատերազմի, սեփական սահմանները պաշտպանելու կամ ընդլայնելու նպատակով⁴:

Իրադարձությունների մասն զարգացումը գերմանական կայսեր առջև դնում էր բարդ խնդիր, այն է՝ ստեղծված իրավիճակում ճիշտ կողմնորոշվել և Արևելքում գերիշխանության համար պայքարում չզիջել օրեցօր ավելի ու ավելի հզորացող մահմեդական տիրակալ Սալահ ադ-Դինին: Այն, որ Ֆրիդրիխ Առաջինը շարունակում էր Արևելքի հետ կապված իր ծրագրերի իրագործումը և չէր պատրաստվում հրաժարվել

¹ Տե՛ս Կ. Մութաֆյան, Կիլիկյան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 150:

² Տե՛ս . . . , նշվ. աշխ., . 670:

³ Adolf Waas, Geschichte der Kreuzzüge by Hans Eberhard Mayer, Idee und Wirklichkeit der Kreuzzüge, Historische Zeitschrift, Bd. 203, H. 2, (Oct. 1966), S. 382

⁴ E. Hehl, Was ist eigentlich ein Kreuzzug, Historische Zeitschrift, Bd. 259, H. 2, (Oct., 1994), S. 310.

դրանից, լավ երևում է նաև եզրագծային սուլթանին ուղարկած նամակից, որտեղ կայսրն իրեն անվանում է հռոմեական բոլոր նվաճումների ժառանգորդ¹:

Պատահական չէ, որ Բյուզանդիայի և Եզրագծային սուլթանության միջև դաշնակցային հարաբերությունների հաստատմանը զուգահեռ հասունանում էր նաև մեկ այլ դաշինք՝ գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկանորունի և սելջուկյան սուլթան Քիլիջ-Արսլանի միջև: Վերջինս մի կողմից շարունակելով Սալահ ադ-Դինի դեմ պայքարը, իսկ մյուս կողմից դիտարկելով Բյուզանդիային որպես թշնամի, կարող էր դառնալ գերմանական կայսեր համար ձեռնուռ դաշնակից: Փաստորեն զարգանում էին դիվանագիտական հարաբերություններ մահմեդական և քրիստոնյա պետությունների միջև:

Խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Մերձավոր Արևելքում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը ճիշտ ներկայացնելու առումով կարևոր նշանակություն ունեն Կիլիկյան Չայաստանի վարած արտաքին քաղաքականությունը: 12-րդ դարի 70-80-ական թվականներին Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական թատերաբեմում տեղի ունեցած փոփոխությունները նպաստավոր պայմաններ էին ստեղծում Կիլիկյան Չայաստանի հետագա ամրապնդման համար, և հաճախ հայ իշխանների ստիպում էին զգուշավոր լինել հզոր պետությունների բարդ դիվանագիտական խաղերում ճիշտ կողմնորոշվելու համար, քանի որ.

1. Կիլիկիայի գլխավոր թշնամին Բյուզանդիան, 1176թ. սելջուկ-թուրքերի կողմից կրած ծանր պարտությունից հետո ստիպված էր հրաժարվել Արևելքի երկրների, այդ թվում նաև Կիլիկյան Չայաստանի նկատմամբ ունեցած ծրագրերից:

2. Չայակական իշխանության մյուս թշնամին՝ Անտիոքի իշխանապետությունը, 1188թ. ասպատակության էր ենթարկվել Սալահ ադ-Դինի կողմից և զրկվել իր տարածքների զգալի մասից: Երբ Սալահ ադ-Դինը գրավեց Բաղրասը, որոշեց գնալ Անտիոք ու պաշարել այն: Նրա տեր Բոհեմունդը (Բիմունդ) վախեցավ այդ բանից և մարդ ուղարկեց Սալահ ադ-Դինի մոտ ու հաշտություն խնդրեց՝ խոստանալով իր մոտ եղած բոլոր մահմեդական գերիներին արձակել²:

1187թ. հուլիսի 4-ին եզրագծային սուլթանը Չաթթինի ճակատամարտում ջախջախեց խաչակրաց բանակը, ապա գրավեց Երուսաղեմը. «Նույն տարվա (1187) սեպտեմբեր ամսին Սալահեդդինն իր զորքերով մեկնեց Ասկալոնից և եկավ պաշարեց Երուսաղեմ քաղաքը: Նա կատաղի հարձակում սկսեց նրա դեմ, որովհետև այնտեղ էին հավաքվել ամեն կողմից փախած բոլոր փրկյալները: Սակայն քանի որ նրանք փրկություն չունեին և որևէ տեղից օգնություն չէին սպասում, նեղ դրության մեջ ընկան, երաշխիքներ ստանալով՝ հանձնեցին քաղաքը: Ֆրանկները դուրս եկան, նրանց թույլատրվեց գնալ, ուր ուզում են»³:

¹ Տե՛ս Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 150:

² Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Բ., Իբն ալ-Ասիր, / թարգմանությունը քննադրից առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի/, Ե., 1981, էջ 273:

³ Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, թարգմանությունը քննադրից, առաջաբանը և ծանոթագրությունները Լ.Յ. Տեր-Պետրոսյանի/, Ե., 1982, էջ 154:

Նման փոփոխություններից հետո, երբ Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական իրավիճակը դարձավ առավել քան լարված, Կիլիկյան Հայաստանը, լինելով բավականին նպաստավոր աշխարհագրական դիրք ունեցող քրիստոնյա պետություն, արագորեն հայտնվեց Ֆրիդրիխ Շիկամորուսի ուշադրության կենտրոնում՝ որպես հնարավոր դաշնակից: Գերմանական կայսեր նկատմամբ հայերի դրական տրամադրվածության մասին հիշատակում է անգամ բյուզանդական պատմագիր Յոնիատեսը. «Իրականում միայն հայերն էին ավեմանների գալը համարում ոչ թե ժողովուրդների ներխուժում, այլ բարեկամների ժամանում»¹: Չնայած նման հիշատակությանը՝ չպետք է մոռանալ Սալահ ադ-Դինին, որը 1180 թ. արշավելով Կիլիկիա և գրավելով Մանաքիր (Հիսն ալ-Արման) ամրոցը՝ չխորացավ դեպի Կիլիկիայի տարածքը և չփորձեց ջախջախիչ հարված հասցնել այս քրիստոնյա պետությանը: Թերևս դրա գլխավոր պատճառն այն էր, որ Սալահ ադ-Դինին դեռ սպասվում էր վճռական պայքար խաչակիրների հետ, իսկ Կիլիկյան Հայաստանին ծանր հարված հասցնելը կնշանակեր ա) առաջիկա բարդ ռազմական գործողություններից առաջ ուժերի վատնում բ) այդ պայքարի ժամանակ իր զորքերի նկատմամբ թշնամաբար տրամադրված ևս մեկ պետության առկայություն:

Ստացվում է, որ Կիլիկյան Հայաստանի հետ դիվանագիտական կապերի պահպանումը 1180-ական թվականներին ձեռնտու էր և՛ Սրբազան Հռոմեական կայսրությանը, և՛ Եգիպտոսի Այյուբյան սուլթանությանը:

Այսպիսով, 12-րդ դարի վերջին քառորդին՝ Բյուզանդիայի արտաքին քաղաքական ազդեցության թուլացումից հետո, Մերձավոր Արևելքում մեծ փոփոխություններ կատարվեցին: Նորաստեղծ Եգիպտոսի էյյուբյան սուլթանությունը ցանկանալով իր գերիշխանության տակ միավորել տարածաշրջանի մահմեդական պետություններին, ինչպես նաև այստեղից վտարել խաչակիրներին՝ դաշնակցային հարաբերություններ հաստատեց Բյուզանդիայի հետ ընդդեմ իրենց ընդհանուր հակառակորդ սելջուկների և խաչակիրների: Այս իրավիճակում անխուսափելի էր դառնում շահերի բախումը սուլթան Սալահ ադ-Դինի և հռոմեական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի միջև, ով, ցանկանալով իր քաղաքական ազդեցությունը տարածել Մերձավոր Արևելքում և վերականգնել նախկին Հռոմեական կայսրության երբեմնի հզորությունը, որպես հնարավոր դաշնակից սկսեց դիտարկել սելջուկ-թուրքերին, նաև Կիլիկյան Հայաստանին, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ակնկալիքներ ուներ՝ կապված Մերձավոր Արևելքում տեղի ունեցող փոփոխությունների հետ:

Լիանա Աղաբեկյան, Ռազմաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին – Հոդվածում ներկայացվում են 12-րդ դարի վերջին քառորդին Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական իրադրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, որոնք պայմանավորված էին Բուզանդական կայսրության քաղաքական ազդեցության թուլացմամբ

¹ , , 2, , 1860, . 25.

և նորաստեղծ Եգիպտոսի էյյության սուլթանության հզորացմամբ: Վերջինս, նպատակ ունենալով իր գերիշխանության տակ միավորել տարածաշրջանի մահմեդական պետությունները, դաշնակցային հարաբերություններ հաստատեց Բյուզանդիայի հետ: Ստեղծված իրավիճակում անխուսափելի էր դառնում հարաբերությունների սրումը Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դինի և Սրբազան հռոմեական կայսր Ֆրիդրիխ Երկամորուսի միջև:

**Лиана Агабекян, Военно – политическая ситуация на Ближнем Востоке накануне
Третьего крестового похода – XII**

Liana Aghabekian, The military and political situation in the Near East on the eve of the third Crusade – In the last quarter of the 12th century after the receding of the external political influence in Byzantium, great changes took place in the Near East. Desiring to unite the muslim states of the region under its dominance and to deport the crusaders the newly created Ajjubic sultanity affirmed allied relations with Byzantium against their common rivals, that is seljuks and crusaders. The collision of the interests of Sultan Sal ad-Din and the Emperor of Rome Fridrich Barbarossa was unavoidable in this situation the latter wishing to extend his political influence in the Near East and to regenerate the former might of the Rome Empire and considering the Seljuk-Turks and the Kilikian Armenia as possible allies though each of them had their own expectations connected with the changes in the Near East.

*Լիանա Աղաբեկյան - Խ. Աբովյանի անվան մանկավարժ. ինստ. պատմության և իրավագիտության
ֆակուլտետի
համաշխարհային պատմության և դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ,
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետ*

